

VISA «ԲԱՐԵՐԱՐ» ՔԱՐՏՈՎ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՕԳՏԻՆ ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հիմնական հասկացություններ

«Քարտ» - VISA «ԲԱՐԵՐԱՐ» քարտ

«Բարեգործական ֆոնդ» - Բանկում «Հայաստան» համահայկական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) անունով բացված ընթացիկ հաշիվ, որին փոխանցվում են Բանկի և Քարտապանների նվիրատվությունները

«Ամենամսյա նվիրատվություն» - Քարտապանի հանձնարարությամբ Քարտապանի կողմից նշված գումարի չափով քարտային հաշվից յուրաքանչյուր ամիս «Բարեգործական ֆոնդին» փոխանցվող նվիրատվություն

2. Ընդհանուր դրույթներ

«VISA «ԲԱՐԵՐԱՐ» քարտով Հիմնադրամի օգտին նվիրատվությունների կատարման կարգը՝ հանդիսանում է Բանկի «Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման պայմանների» անբաժանելի մասը և սահմանում է Քարտով «Բարեգործական ֆոնդին» Բանկի և Քարտապանների կողմից գումարների փոխանցման կարգը:

3. Նվիրատվությունների կատարման կարգը

3.1. Բանկը, համաձայն Հիմնադրամի հետ կնքված պայմանագրի, Հիմնադրամի օգտին է փոխանցելու հետևյալ գումարները.

3.1.1. Քարտով առևտրի և սպասարկման կետերում կատարված յուրաքանչյուր վճարային գործառնության 0.3%-ը:

3.1.2. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարի 50%-ը, եթե Քարտը սպասարկվում է վճարովի հիմունքներով:

3.1.3. Քարտապանի կողմից Բանկին տրված հանձնարարականով Քարտի «Բարեգործական ֆոնդին» փոխանցման ենթակա գումարները:

3.2. Բանկը սույն կարգի 3.1 կետով հավաքագրված գումարները փոխանցելու է «Բարեգործական ֆոնդին» ամսական պարբերականությամբ՝ յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված գործարքների զոյացած գումարը մինչև հաջորդ ամսվա 10-րդ (տասներորդ) բանկային օրը փոխանցելու միջոցով:

3.3. Քարտապանի կողմից Քարտի «Բարեգործական ֆոնդին» փոխանցումներ կատարելու Բանկին տրված հանձնարարականը ենթակա է կատարման, եթե Քարտապանի հաշվին տվյալ ամսվա առաջինից մինչև 20-րդ օրերի ընթացքում առկա են դրամական միջոցներ:

4. «Բարեգործական ֆոնդում» միջոցների տնօրինման եղանակը

4.1. «Բարեգործական ֆոնդի» միջոցներն ուղղվելու են ՀՀ մանկատներում բնակվող երեխաների կարիքները հոգալու համար:

4.2 «Բարեգործական ֆոնդի» միջոցները տնօրինվելու են Հիմնադրամի կողմից՝ Բանկի հետ նախապես համաձայնեցված կարգով: